


**ՄԱՐՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ\***

*Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական  
ինստիտուտի ասպիրանտ  
Հանրապետության նախագահի աշխատակազմի ավագ մասնագետ  
Հայաստանի Հանրապետություն  
maroghkasyan.mg.mg@gmail.com  
0009-0002-3867-7044   
DOI: 10.54503/1829-4073-2026.1.140-151*

**ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԾԱԾԿԱՆՈՒՆՆԵՐԻ  
ՇՈՒՐՋ**

***Ամփոփում***

Տարբեր ժամանակներում գրողները նախընտրել են ստեղծագործել ծածկանունով կամ անստորագիր: Ինչո՞ւ է առհասարակ գրողը ներկայանում ծածկանունով կամ կեղծանունով: Պատճառները շատ են ու յուրաքանչյուր գրողի համար ունեցել և կարող են ունենալ իրենց ուրույն հիմքերը՝ երկար անունը կարճով փոխարինելը, նման կամ նույն անունը կրող մեկ այլ գրողից տարբերվելը, ազգային ծագումը թաքցնելը, ավելի խոսուն անունով հայտնի դառնալը, գաղտնիությունը, հեղինակի հասարակական դիրքը, գրաքննությունը և այլն:

Մեծանուն երգիծաբան Հակոբ Պարոնյանը ևս իր ստեղծագործությունների, հոդվածների մեծ մասը ստորագրել է ծածկանունով կամ հրապարակել դրանք անստորագիր: Հոդվածում մասնավորապես անդրադարձ է կատարվում «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերում գրողի այն երկերի դերանուն-ծածկանունների և մի քանի այլ ծածկանունների, որոնք տարիներ շարունակ չեն վերագրվել Պարոնյանին: Քննության են առնվում Հ. Պարոնյանի կողմից այդ ծածկանունների գործածության շարժառիթները, ներկայացվում է ծածկանունների կիրառության քանակական վիճակագրություն, և ընդգծ-

\* Հոդվածը ներկայացվել է 08.03.2026, գրախոսվել է 27.03.2026, ընդունվել է տպագրության 30.04.2026:

© 2026 հեղինակ(ներ): Բաց հասանելիությամբ հոդված է՝ Creative Commons լիցենզիայի (ոչ առևտրային 4.0 միջազգային լիցենզիա) պայմաններին համապատասխան:

## **Հակոբ Պարոնյանի մի քանի ծածկանունների շուրջ**

վում են դրանց գործածման անհամապատասխանություններն ու հնարավոր պատճառները:

**Բանալի բառեր՝** *Հակոբ Պարոնյան, ծածկանուն, կեղծանուն, «Մեղու» երգիծաթերթ, «Թափրոն» երգիծաթերթ, դերանուն-ծածկանուն, անստորագիր:*

### **Ներածություն**

Բանասիրության կարևորագույն խնդիրներից մեկը եղել և մնում է անանուն, ծածկանունով կամ կեղծանունով գրված տեքստերի հեղինակի և ստեղծման ժամանակի բացահայտումը (ատրիբուցիա): Այսպիսի տեքստերն ի հայտ են եկել գրավոր խոսքի ձևավորմանը զուգահեռ. տարբեր նպատակներից, դրդապատճառներից ելնելով՝ տեքստի հեղինակը նախընտրել է հրապարակել գրվածը անստորագիր, ծածկանունով կամ կեղծանունով: Գրականագետ, գրող, թարգմանիչ Վալենտին Դմիտրիևը գրում է. «Գրական միստիֆիկացիայի ճանապարհին առաջին քայլը կեղծանունն է, այն է՝ մտացածին անունը. հեղինակը մոլորեցնում է ընթերցողներին՝ իրեն կոչելով ոչ թե իր, այլ ուրիշի անունով:

Թեպետ երբեմն նրան դա էլ բավական չէ. նա իր ստեղծագործությունը վերագրում է մեկ ուրիշին՝ շատ հաճախ հորինված, ընդ որում, փորձում է օժտել նրան հատկանիշներով՝ ընթերցողներին համոզելով նրա իսկության մեջ»:<sup>1</sup> Գրականագետը կարևորում է կեղծանունների ուսումնասիրությունը՝ որպես բոլոր ժամանակների և ժողովուրդների գրական կյանքի կարևորագույն գործոն: Ըստ Դմիտրիևի՝ այն հավասարապես հարում է մատենագիտությանը, լեզվաբանությանը և գրականագիտությանը:<sup>2</sup>

Սույն հոդվածում կիրառելու ենք «ծածկանուն» եզրույթը, և, քանի որ այս հասկացությանը զուգահեռ տարբեր գրքերում և գիտական ուսումնասիրություններում գործածվում են նաև կեղծանուն, մականուն, գրչանուն, գրական անուն եզրերը, հարկ ենք համարում ընդգծել, որ ծածկանունն իմաստով և գործածության շրջանակով մոտ է կեղծանվանը: Փ. Մեյթիխանյանը փաստում է, որ կեղծանունն ու ծածկանունը, չնայած դրանց բաղադրիչ արմատների (կեղծ և ծածուկ) տարբերությանը, ունեն շփման եզրեր և կարող են փոխարի-

<sup>1</sup> **Дмитриев** 1973, 6.

<sup>2</sup> **Дмитриев** 1977, 4.

## Ղուկասյան Մ.

նել մեկը մյուսին:<sup>3</sup> Ծածկանունը կամ կեղծանունն անհատի կողմից (գրող, նկարիչ, քանդակագործ և այլն) ընտրված անուններ են, որոնցով նա ներկայանում է հանրությանը՝ որոշ դեպքերում թաքցնելով իր անձն այդ անվան ներքո, որոշ դեպքերում էլ պարզապես նախընտրելով հանդես գալ այդ անվամբ՝ առանց գաղտնիության նպատակադրման:

Այս հոդվածում կանդրադառնանք Հակոբ Պարոնյանի այն գործերի ծածկանուններին, որոնք չեն ընդգրկվել հեղինակի երկերի ժողովածուներում և տարիներ շարունակ չեն վերագրվել երգիծաբանին: Ինչպես հայտնի է, Պարոնյանը մամուլում հանդես է եկել մի քանի տասնյակ տարբեր գրական ծածկանուններով: Միայն Բախտիար Հովակիմյանի «Հայոց ծածկանունների բառարանում» թվարկվում է նրա շուրջ 54 ծածկանուն՝ *Ա., Անանուն, Անաքարսիս, Անիկա, Ապրակ, Գող, Գրանենգ, Դեպ, Դուն, Ես, Թապրոն, Թմբուկ, Լուսարար, Կայծակ, Կարկուտ, Ով է նե, Սպինքս, Փայլակ, Փչող, Քամ և այլն:*<sup>4</sup> Ի դեպ, նշված բառարանում ընդգրկված չեն *Մենք, Ոմն, Վառարանը, Թաղեցի ոմն* ծածկանունները: Այս բոլոր ծածկանուններով ստորագրված տեքստերի հետևում, անկասկած, հանճարեղ երգիծաբանն է, ով ունի իր ինքնատիպ ձեռագիրը: Հրանտ Ասատուրը գրում է. «Իր ոճը թէև միօրինակ չէ քերականական տեսակետով, սակայն ունի լեզուական որոշ դրոշմ մը որով կարելի է առանց վարանման բացայայտ կերպով ցոյց տալ /Թատրոն/ի յօդուածներէն անոնք զորս ծածկանունով ստորագրած կամ անստորագիր գրած է Պարոնեան, և անոնք զորս գրած են իր աշխատակիցները»:<sup>5</sup>

Հակոբ Պարոնյանի այս երկերի հեղինակային պատկանելության հարցին տարբեր ժամանակներում գրականագետների կողմից տարակարծիք անդրադարձներ են եղել: Պարոնյանագետ Գառնիկ Ստեփանյանն այս գործերում տեսնում էր Պարոնյանի խմբագրական միջամտությունը, բայց ոչ հեղինակային ձեռագիրը: Չնայած գրողի երկերի լիակատար ժողովածուի խմբագրի այդ կարծիքին՝ ժողովածուն կազմող Ալիս Մանուկյանը դերանուն-ծածկանունները վերագրում է Պարոնյանի գրչին:<sup>6</sup> Գրականագետ Գևորգ Մադոյանն ընդունում է, որ Պարոնյանի հեղինակությամբ հայատառ թուրքերեն շատ գործեր կան, որոնց զգալի մասը մնացել է մամուլի էջերում և դեռ բացահայտված չէ. «Դրանց մեծագույն մասն առայժմ չի հայտնաբերված, և

<sup>3</sup> Տե՛ս **Մեյթիխանյան** 2020, 216:

<sup>4</sup> **Հովակիմյան** 2005, 702:

<sup>5</sup> **Հրանտ Ասատուր** 1921, 186:

<sup>6</sup> Տե՛ս **Մանուկյան** 1953, № 6:

## **Հակոբ Պարոնյանի մի քանի ծածկանունների շուրջ**

միայն մի մասը՝ շուրջ 50 կտոր, պահպանվել է Հ. Պարոնյանի հրատարակած պարբերականների՝ մեզ հասած կոմպլեկտներում, այդ թվում միայն «Մեղուի» 1872-1874 թթ. համարներում՝ 40 կտոր»:<sup>7</sup> Այս տեսանկյունից ընդարձակ աշխատանք է կատարել Մարգարիտ Ըրղաթբաշյանը՝ մասնավորապես տողատակի թարգմանություններով հրատարակելով «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» երգիծավեպը:<sup>8</sup> Վիճելի հարցին համոզիչ հիմնավորում է տվել ժամանակակից գրականագետ պրոֆեսոր Ալբերտ Մակարյանը՝ գիտական փաստերով վերջ դնելով առկա բոլոր անհամաձայնություններին:<sup>9</sup>

Ինչն է դրդել երգիծաբանին գրել այլ անվան ներքո, չէ՞ որ արդարամիտ Պարոնյանն իրականում ոչ մեկից չէր վախենում, միայն իրեն բնորոշ լեզվով ձաղկում և մերկացնում էր ժամանակի արատավոր երևույթներն ու երևելի անձանց: Հրանտ Ասատուրը հիշում է. «Ուղղասիրություն և բարեհամբույր բնավորություն: «Ավելի կը սիրեմ խոտ ուտել և ուղիղ մարդ մնալ քան պնակ լիզել և բարիք վայելել», կ'ըսեր»:<sup>10</sup> Պարոնյանին բնորոշ չէին շողոքորոթությունը, շահույթի դիմաց որևէ մեկին գովաբանելը, որքան էլ ֆինանսական միջոցները սուղ լինեին:

Ինչպես հայտնի է, «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի խմբագրի պաշտոնը Պարոնյանը ստանձնեց բավականին ծանր ժամանակահատվածում, նյութական զրկանքներ կրելով հրատարակեց հանդեսները, որոնք չունեին բավարար թվով աշխատակիցներ: Այս պայմաններում խմբագիրը միաժամանակ ստանձնում է նաև երգիծաթերթերի թղթակիցների դերը: Ամենայն հավանականությամբ, Պարոնյանը չի ցանկացել երգիծաթերթերի բոլոր էջերն իր անունով ստորագրել, այդ իսկ պատճառով որոշել է պարբերաբար հանդես գալ ծածկանուններով:

Այս տեսանկյունից, փաստորեն, ծածկանունները տեխնիկական խնդիր են լուծել՝ միաժամանակ հետաքրքրություն առաջացնելով ինչպես հեղինակի ժամանակակիցների, այնպես էլ հետագա ուսումնասիրողների շրջանում:

Երգիծաբանի համար միշտ առաջնային է եղել թերթի էջերում հրապարակվող նյութի բովանդակությունը, ասելիքը, այլ ոչ թե հեղինակի անունը կամ նրա հանրահռչակումը: «Մեղու» երգիծաթերթի 1873 թվականի 164-րդ

<sup>7</sup> Մադոյան 1954, 49:

<sup>8</sup> Տե՛ս Ըրղաթբաշյան 2017:

<sup>9</sup> Տե՛ս Մակարյան 2018, 219–240:

<sup>10</sup> Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում 2004, 71:

## Ղուկասյան Մ.

համարում «Ո՛վ է նե՛» ծածկանունով հրատարակված «Սուրհանդակ Մեղուի» շարքում կարդում ենք.

«– Մեղու՛, սա «ՈՎ է Նե»ն ո՛վ է նե՛՝ ինձի չ՛ըսե՛ս:

– Ինչո՞ւդ պէտք»: <sup>11</sup>

Այսպիսով, հարցի պատասխանն ավելի քան խոսուն է. Պարոնյանը կարևորում է տեքստի բովանդակությունը, գրվածի իմաստն ընթերցողին հասցնելը և անհրաժեշտություն չի տեսնում պարզաբանելու, թե ով է դրա հեղինակը:

Ուշարժան է, որ ռուս իրականության մեջ Հակոբ Պարոնյանի ժամանակակից պոետ-երգիծաբան, թարգմանիչ, քննադատ Դմիտրի Մինանը ևս շատ ծածկանուններ է ունեցել: Նրա մասին գրականագետ Դմիտրիևը գրում է. «Հաճախ Մինանը ծածկանուններ ստեղծելու համար օգտվում էր գրական ոեմինիսցենցիաներից: Նրա շատ հումորեսկներ ստորագրված են եղել՝ «*Քեզ ի՞նչ իմ անունը*»: Նա վերցրել է Պուշկինի այդ տողը՝ ցանկանալով ասել՝ արդյո՞ք միևնույն չէ, թե ով է գրողը: Գլխավորը բովանդակությունն է, այլ ոչ թե ստորագրությունը, կարևոր է, թե ինչ և ինչպես են գրված, այլ ոչ թե ում կողմից»: <sup>12</sup>

Կյանքի վերջին տարիներին անգամ՝ 1890 թվականին, Պարոնյանը հավատարիմ մնաց ծածկանունով գրելու իր ընտրությանը. «Տարագ» թերթի խմբագիր Տիգրան Նազարյանին գրած նամակում խոսելով իր թղթակցության պայմանների մասին՝ նա շեշտում է. «Չմոռնամ հայտնել թե հողվածներու ներքև՝ գորս ապագային, եթե ուզեմ, մասնավոր տեսրակով հրատարակելու իրավունքն ինձ կը վերապահեմ, անունս չդնելով, սուտանուն պիտի գործածեմ»: <sup>13</sup>

Ավելի մանրամասն անդրադառնանք Հակոբ Պարոնյանի մի քանի ծածկանունների:

### **«Մեղու» երգիծաթերթի մի քանի ծածկանունների վերաբերյալ**

Կ. Պոլսի «Մեղու» երգիծաթերթում հրատարակված, սակայն երգիծաբանի ժողովածուներում չընդգրկված երկերը ստորագրված են հետևյալ ծածկա-

<sup>11</sup> «Մեղու», 1873, № 164, 18.08.1873 (հրատարակվել է «Ո՛վ է նե՛» ծածկանունով):

<sup>12</sup> **Дмитриев** 1986, 165.

<sup>13</sup> Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում 2004, 209:

\* Փակագծերում նշված է ծածկանունների գործածության քանակը:

### Հակոբ Պարոնյանի մի քանի ծածկանունների շուրջ

նուններով՝ Ես (6),\* Դուն (19), Մենք (1), Ոմն (1), Անիկա (3), Ո՞վ է նէ (10): Հետաքրքրական է, որ «Մեղու» երգիծաթերթի 1873 թվականի երկու՝ 149-րդ և 150-րդ համարներում լույս տեսած «Կրօնական ժողով և Ղազար վարդապետին խալբախը» հրապարակախոսական ակնարկի միայն երկրորդ մասն է ստորագրված «Դուն» ծածկանունով, իսկ 1873 թվականի 149-րդ համարում տպագրված առաջին մասն անստորագիր է: Բնականաբար, ենթադրվում է, որ այն ևս կարող էր ունենալ նույն ծածկանունը: Սա կա՛մ տպագրական վրիպակ է (քիչ հավանական է, քանի որ իրար անմիջապես հաջորդող համարներում են տպագրվել նյութերը, Պարոնյանը հազիվ թե մոռանար և միայն շարունակությունը ծածկանունով հրատարակել), կա՛մ էլ ևս մեկ փաստ, որ Պարոնյանն ուղղակի հետևողականորեն չի ցանկացել գործածել ծածկանունը՝ առաջնային համարելով տպագրվող նյութի բովանդակությունը:

«Մեղու» երգիծաթերթի 1873 թվականի մայիսի 19-ի 139-րդ համարում «Ծեփոդականութիւն կամ շողոքորթութիւն» ակնարկում կարդում ենք ոմն տիկնոջ և նրա սիրտն իր շողոքորթությամբ նվաճող տղամարդու հետևյալ երկխոսությունը.

«— Հա՛հ, հա՛հ հա՛հ հա՛հ, այնչափ աղւո՞ր եմ:

— Տարակոյս չը կայ ազնիւ, շատ աղւոր էք:

— Հա՛հ, հա՛հ, հա՛հ հաաաա՛հ...

ԴՈՒՆ

— Հա՛, հա՛, հա, հա՛, հա՛:

ԵՍ

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛:

ԱՆԻԿԱՅ

— Հի՛, հի՛, հի՛, հի՛, հի՛, հի՛:

ՄԵՂՈՒ»<sup>14</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս երկխոսության մեջ ի մի են բերված նշված երգիծաթերթում Պարոնյանի գործածած դերանուն-ծածկանունները, ինչպես նաև իր արդեն հայտնի «Մեղու» ծածկանունը: Կ. Պոլսի «Մամուլ» հանդեսի խմբագիր Գևորգ Այվազյանը հեզնանքով մեջբերում է այս տողերը՝ սկսելով այսպես. «Հետևեալ տողերն ալ մեր տէլի ճօրճիէն կը քաղենք.»<sup>15</sup> Նա, լինելով անզիջում պայքարի մեջ Պարոնյանի հետ, «տէլի ճօրճիէ» (տէլի - գիժ) բնորոշումն է տալիս երգիծաբանին: Այսկերպ Պարոնյանի ժամանակակցի կողմից

<sup>14</sup> «Մեղու», № 139, 19.05. 1873:

<sup>15</sup> «Մամուլ», № 285, 23.05.1873 (Ստորագրված է ենուլք Տէմիրճեան անունով):

## Ղուկասյան Մ.

հաստատվում է նաև այս դերանուն-ծածկանունների՝ նրա գրչին պատկանելը: Վերը մեջբերված երկխոսությունը ևս մեկ փաստ է, որ բոլոր այդ ծածկանունները մեկ մարդու կողմից են կիրառված:

Գ. Այվազյանը «Մամուլի» 1873 թվականի 340-րդ համարի «Առ շոշորդաբան» մանրապատումում թունոտ սլաքներն ուղղելով Պարոնյանի դեմ՝ գրում է. «Հապա ո՞ւր թողունք ասկէ երկու շաբաթ առաջ նոյն իսկ քու թերթիդ մէջ շարած Ես, Դուն, Ան, Գովինըս, Դիմացինըդ եւ այլն միմոսական ստորագրութիւններդ, որոնցմով կատարեալ յիմարանոցի մը փոխուած էր Մեղու հանդէսը»:<sup>16</sup> Չի բացառվում նաև, որ, ի հեճուկս այս բնորոշման, երգիծաբանը որոշել է ծածկանունները խառը և ոչ համակարգված կիրառել:

Համաշխարհային պարբերական մամուլում բավականին տարածված են եղել «N.» և «NN.» ստորագրությունները, որոնք լատիներեն «Nemo» (ոչ ոք) և «Nomen nescio» (անունը չգիտեմ, այլ կերպ ասած՝ ինչ-որ մեկը) բառերի կրճատ տարբերակներն են: Պարոնյանի կողմից «Ոմն» ծածկանվան գործածությունն էլ այս շարքից կարելի է համարել: Տիրապետելով մի շարք լեզուների՝ երգիծաբանը կարող էր հաղորդակից լինել միջազգային մամուլում կիրառվող և տարածում գտած հնարքներին՝ անհրաժեշտության դեպքում գործածելով դրանք:

Բնավ պատահական չէ նաև Պարոնյանի կողմից դերանուններն իբրև ծածկանուն գործածելը. անվան դեր կատարող այս խոսքի մասերով գրողը հասնում է ասելիքի ընդհանրացման, դրանցով ավելի ընդգծում իմ, քո, նրա, մենք-ի անունից արտահայտվող բովանդակության կարևորությունը: Նշանագետ Յու. Լոտմանը «Հատուկ անունների աշխարհը» («Мир собственных имен») վերտառությամբ ակնարկում գրում է. «Ամբողջ ընդարձակ, միևնույն ժամանակ ակունքներով հնագույն շերտերի հասնող մշակույթի ոլորտներ են կապված առաջին դեմքի հետ և ներկայացնում են «ich-Erzählung»՝ պատում առաջին դեմքով: Սակայն այդ «ես»-ը միևնույն ժամանակ «բոլորը «ես» կարգավիճակով» իմաստի կրողն է»:<sup>17</sup>

Պարոնյանի «Ես»-ը, «Դուն»-ը, «Մենք»-ը, «Ոմն»-ը, «Անիկա»-ն, «Ո՞վ է նէ»-ն կարող էր լինել իր ժամանակակիցներից յուրաքանչյուրը, ով կբարձրաձայներ այդ օրերի իրականությանն առնչվող, իսկ որոշ գրվածքներով նաև՝ համամարդկային ցավոտ հարցերն ու խնդիրները:

<sup>16</sup> «Մամուլ», № 340, 01.12.1873:

<sup>17</sup> Лотман 2000, 40.

**«Թատրոն» երգիծաթերթի մի քանի ծածկանունների վերաբերյալ**

Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթում լույս տեսած, սակայն Պարոնյանի ժողովածուներում չընդգրկված երկերի ծածկանուններն են՝ *Ես* (35), *Դուն* (5), *Թաղեցի ոմն* (1), *Հէռադէտ ոմն* (1), *Վառարանը* (1), *Կարկուտ* (2), *Ո՛վ է նէ* (2): Փաստորեն, այստեղ «Մեղու» երգիծաթերթի ծածկանուններին ավելացել են «Թաղեցի ոմն», «Հէռադէտ ոմն», «Վառարանը», «Կարկուտ» ծածկանունները, որոնք կարելի է պայգոնիմներ կոչել: Գրականագետ Վ. Դմիտրիևը գրում է. «Երգիծաբանները միշտ ձգտել են այնպես ստորագրել, որ հասնեն երգիծական արդյունքի: Դա էր նրանց ծածկանունների հիմնական նպատակը. անունը թաքցնելու ցանկությունն այստեղ երկրորդ պլան էր մղվում: Այդ իսկ պատճառով նման ծածկանունները կարելի է ընդգծել հատուկ խմբի մեջ և կոչել պայգոնիմներ (հուն.՝ *paizen* - կատակել)»:<sup>18</sup>

«Թատրոն» երգիծաթերթի վերը նշված ծածկանունների գործածությունն ուսումնասիրելիս մի շարք ուշագրավ փաստերի ենք բախվում. «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» վիպակը Պարոնյանը ստորագրել է «Ես» ծածկանունով, սակայն թերթի 1874 թվականի 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 58-րդ, 75-րդ, 77-րդ, 79-րդ, 1875 թվականի 81-րդ, 82-րդ, 84-րդ, 88-րդ, 89-րդ, 92-րդ, 94-րդ, 97-րդ, 101-րդ համարներում վիպակի մասերը հրապարակվել են անստորագիր: «Դուն» ծածկանունը գործածված է հինգ անգամ: «Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը հատվածաբար լույս է տեսել 1874 թվականի 73-րդ, 74-րդ, 75-րդ, 77-րդ, 79-րդ համարներում անստորագիր, սակայն 1875 թվականի 84-րդ համարում՝ զարմանալիորեն «Դուն» ծածկանունով: Զարմանք ենք ապրում նաև, երբ 1875 թվականի 105-րդ համարում հրապարակված «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» վիպակի վերջում կարդում ենք «Դուն» ստորագրությունը. չէ՞ որ Պարոնյանն այս վիպակը ստորագրում էր «Ես» ծածկանունով կամ էլ ուղղակի անստորագիր էր թողնում:

«Նկարագրութիւն դիմաց եւ բնաւորութեանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց» ակնարկաշարը լույս է տեսել «Ես» ծածկանունով և անստորագիր, բացառություն են կազմում միայն 1875 թվականի 122-րդ և 131-րդ համարներում, համապատասխանաբար, հրապարակված «Դումէլի հիսար» և «Պօյաճի քէօյ» ակնարկները, որոնցից առաջինն ունի «Վառարանը», իսկ երկրորդը՝ «Կարկուտ» ծածկանունը:

<sup>18</sup> **Дмитриев** 1977, 228.

## Ղուկասյան Մ.

Ինչո՞վ բացատրել այս անհամապատասխանությունները. վերագրենք սա Պարոնյանի անուշադրությա՞նը, թե՛ նպատակադրված խառը գործածությա- նը: Երկու տարբերակներն էլ հավանական են: Հրանտ Ասատուրը հիշում է. «Իր հրատարակած թերթերուն գալով, վերջին պահուն, երբ նեղն կը դնեն եղեր, այն ատեն կը նստի կը գրե: Բայց արագ կ'աշխատի եղեր և իր գրած- ները նորեն սրբագրելու սովորությունը չունի եղեր: Մեկ գրչով գրած է իր գոր- ծերեն մեծ մասը: Քովս գտնվող ձեռագիրները ապացույց են այս մասին. շատ քիչ *rature* (ուղղում) կա անոնց մեջ: Բայց Պարոնյան *méthodique* (մեթոդի) մարդ եղած չ'է. օրն օրին գրած է միշտ, ինչպես օրն օրին ապրած է»:<sup>19</sup> Հրանտ Ասատուրի այս խոսքերը նկատի ունենալով հանդերձ՝ պետք է փաս- տել, որ, ստեղծագործական անհրաժեշտությունից ելնելով, երգիծաբանը որոշ դեպքերում «մեկ գրչով» չի բավարարվել, հղկել է տեքստը, մաքրել ավե- լորդություններից, բյուրեղացրել այն: Բավական է հիշել, թե «Պտույտ մը Պոլ- սո թաղերու մեջ» ակնարկաշարը որքան տարբերակներ է ունեցել՝ «Քաղա- քական աշխարհագրություն»-ից մինչև «Նկարագրություն դիմաց և բնավո- րությանց մայրաքաղաքիս զանազան թաղերու ազգայնոց»: Պարոնյանի հա- մար բովանդակությունն էր առաջնային, իսկ ծածկանվան խառը գործածու- յունը, թերևս, տեխնիկական խնդիր է եղել, որին նա կարևորություն չի տվել:

### **Եզրակացություններ**

Ընդհանրացնելով Պարոնյանի մի քանի ծածկանունների վերաբերյալ ասվածը՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ինքնակրկի կողմից ինչպես շուրջ 54 ծածկանվան, այնպես էլ հողվածում քննարկված ծածկանունների գործածության պատճառներից մեկը, թերևս, այն է, որ լինելով խիստ համեստ անձնավորություն, Պարոնյանն անհարմար է զգացել իր անուն-ազգանունով հանդես գալ իր իսկ խմբագրած թերթերի էջերում,

2. Ծածկանունների կիրառությունը երգիծաբանի դեպքում իր անձը որևէ մեկից, գրաքննությունից կամ այլ գործոններից թաքցնելու նպատակ երբեք չի հետապնդել, այլապես դրանք այդքան ինքնաբացահայտող չէին լինի: Բա- ցի այդ, Պարոնյանը որևէ մեկից չի վախեցել և միշտ համարձակորեն քննա- դատել է բոլոր նրանց, ովքեր արժանի են եղել այդ քննադատությանը: Նրա

<sup>19</sup> Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում 2004, 68:

## **Հակոբ Պարոնյանի մի քանի ծածկանունների շուրջ**

կենսագրության որևէ դրվագ մեզ չի հուշում ծածուկ հանդես գալու մասին ինչ-ինչ հանգամանքներ,

3. որոշ ծածկանուններ երգիծական արդյունքի հասնելու նպատակ են հետապնդել՝ միևնույն ժամանակ ենթատեքստ պարունակելով,

4. դերանուն-ծածկանունների կիրառությունն ընդհանրացնող նշանակություն ունի, ընդգծում է յուրաքանչյուրի կողմից բարձրաձայնման ենթակա նյութի կարևորությունը,

5. Հակոբ Պարոնյանի համար թեպետ ծածկանունների կիրառությունն ինքնանպատակ չի եղել, այդուհանդերձ այն երգիծաբանի ստեղծագործական կյանքում չի ունեցել նաև խիստ մեծ առաջնահերթություն: Այդ մասին է վկայում հաճախ ծածկանունների խառը, անկանոն գործածությունը:

Պարոնյանը միշտ առաջնակարգությունը տալիս էր հրապարակվող նյութի իմաստին, բովանդակությանը. կարևորը ասելիքը ճիշտ նպատակակետին հասցնելն էր, իսկ մնացածը անէական, տեխնիկական և, այո, «մեկ գրչով» լուծվող հարցեր են եղել նրա համար:

## **ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ըրդաթբաշյան Մ.** 2017, Նորահայտ էջեր Հակոբ Պարոնյանի գրական ժառանգությունից. («Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի հայատառ տաճկերեն երկերը), Երևան-Լոս Անջելես, 325 էջ: (*Ērghat' bashyan M. 2017, Norahayt eĵer Hakob Paronyani grakan zharangut'yunits'. ("Meghu" yev "T'atron" yergitsat'ert'eri hayatar tachkeren yerkerē), Yerevan-Los Angeles, 325 e'j*). **Krgatbashian M.** 2017, *Newly discovered pages from Hakob Paronyan's literary heritage (Hakob Paronyan's turkish works written in Armenian letters from "Meghou" and "Tatron" satiric newspapers), Yerevan-Los Angeles, 325 pages (in Armenian).*

**Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում** 2004, Աշխատասիրությամբ Ալ. Մակարյանի, Երևան, ԳԱԹ, 292 էջ: (*Hakob Paronyan zhamanakakitsneri husherum ev vkayut'yunnerum 2004, Ashkhataşirut'yamb Al. Makaryani, Erevan, GAT', 292 e'j*). **Hakob Paronyan in the memories and evidences of contemporaries** 2004, *With the diligence of Al. Makaryan, Yerevan, Museum of Literature and Art, 292 pages (in Armenian).*

**Հովակիմյան Բ.** 2005, Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 25000 ծածկանուն), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 788 էջ: (*Hovakimyan B. 2005, Hayots tsatskanunneri bararan (8000 heghinaki 25000 tsatskanun), Erevan, Erewani hamalsarani hratarakch'ut'yun, 788 e'j*). **Hovakimyan B.** 2005, *Dictionary of Armenian pseudonyms (25000 pseudonyms of 8000 authors), Yerevan, Yerevan University Press, 788 pages (in Armenian).*

**Հրատ Ասատուր** 1921, Դիմաստուներն, Կ. Պոլիս, Հրատարակութիւն եւ տպագրութիւն Կ. Քէշիշեան որդի, 280 էջ: (*Hrant Asatur 1921, Dimastuerner, K. Polis, Hratar-*

## Ղուկասյան Մ.

*kut'wn yew tpragrut'wn K. K'eshishean ordi, 280 e'j). Hrant Asatur 1921, Dimastuerner, Constantinople, Publishing and printing son K. Qeshishean, 280 pages (in Armenian).*

**Մադոյան Գ.** 1954, Հ. Պարոնյանի հայաստառ թուրքերեն և թուրքախառն հայերենով գրված երկերի մասին, Գրական թերթ, Երևան, № 13 (741), 09.04.1954, էջ 4: (**Madoyan G. 1954, «H. Paronyani hayatar' turkeren ev turqakhar'n hayerenov grvats yerkeri masin», Grakan t'ert', Erevan, № 13 (741), 09.04.1954, e'j 4).** **Madoyan G.** 1954 "About Hakob Paronyan's works written in Turkish letters by Armenian letters and Armenian with Turkish words", *Literary newspaper, Y., № 13 (741), April 9, page 4 (in Armenian).*

**Մակարյան Ա.** 2018, Կրկին Պարոնյանի հետ, Երևան, «Անտարես», 312 էջ: (**Makaryan A. 2018, Krkin Paronyani het, Erevan, "Antares", 312 e'j).** **Makaryan A.** 2018, *Again with Paronyan, Yerevan, "Antares", 312 pages (in Armenian).*

**Մանուկյան Ա.** 1953, Հ. Պարոնյանի գրական ժառանգության շուրջը, Տեղեկագիր Հայկական ՍՍԴ գիտությունների ակադեմիայի, Երևան, № 6, էջ 61–77: (**Manukyan A. 1953, H. Paronyani grakan zharangut'yan shurjē, Teghekagir Haykakan SSR gitut'yunneri akademiayi, Erevan, t'iv 6, e'j 61–77).** **Manukyan A.** 1953, *About Hakob Paronyan's literary heritage, "Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR", Yerevan, № 6, 61–77 pages (in Armenian).*

**Մեյթիխանյան Փ.** 2020, Կեղծանուն, ծածկանուն, մականուն տերմինների շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., № 3, էջ 213-224: (**Meytikhanyan P. 2020, Keghtsanun, tsatskanun, makanun terminneri shurj, Patma-banasirakan handes, Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., № 3, e'j 213-224).** **Meytikhanyan P.** 2020, *"On the terms of pseudonym, nickname", Historical-philological journal, Yerevan, NAS RA "Science" publishing-house, № 3, pages 213-224 (in Armenian).*

«Մամուլ», № 340, 01.12.1873, «Մամուլ», № 285, 23"05"1873: (**"Mamul", № 340, 01.12.1873, "Mamul", № 285, 23.05.1873).** **"Press", № 340, 01.12.1873, "Press", № 285, 23.05.1873 (In Armenian).**

«Մեղու», № 164, 18.08.1873, «Մեղու», № 139, 19.05.1873: (**"Meghu", № 164, 18.08.1873, "Meghu", № 139, 19.05.1873).** **"Bee", № 164, 18.08.1873, "Bee", № 139, 19.05.1873 (in Armenian).**

**Дмитриев В. 1973, Замаскированная литература, М., «Книга», 128 с. (Dmitriev V. 1973, Zamaskirovannaya literatura, M., Izdatel'stvo «Kniga», 128 s.).** **Dmitriev V.** 1973, *Masked Literature, M., Publishing House "Book", 128 pages (in Russian).*

**Дмитриев В. 1977, Скрывшие свое имя, М., «Наука», 312 с. (Dmitriev V. 1977, Skryvshie svoe imya, M., Izdatel'stvo «Nauka», 312 s.).** **Dmitriev V.** 1977, *Hidden their name, M., Publishing House "Science", 312 pages (in Russian).*

**Дмитриев В. 1986, Придуманные имена, М., «Современник», 255 с. (Dmitriev V. 1986, Pridumannye imena, M., «Sovremennik», 255 s.).** **Dmitriev V.** 1986, *False names, M., "Contemporary", 255 pages (in Russian).*


**Лотман Ю. 2000, Семиосфера, Санкт-Петербург, «Искусство-СПб», 704 с. (Lotman YU. 2000, Semiosfera, Sankt-Peterburg, «Iskusstvo-SPB», 704 s.).** **Lotman. Ju.** 2000, *Semiosphere, Saint Petersburg, "Art-SPB", 704 pages (in Russian).*

**MARO GHUKASYAN**

*PhD student of the Research Institute of Ancient Manuscripts  
named after Mesrop Mashtots*

*The Office of the President of Armenia, Senior specialist  
Republic of Armenia*

maroghukasyan.mg.mg@gmail.com

0009-0002-3867-7044 

## **CONCERNING SEVERAL PSEUDONYMS OF HAKOB PARONYAN**

### **Summary**

Throughout various historical periods, authors have often opted to use pseudonyms or remain anonymous when creating their works. This prompts the question of why an author would generally choose to present themselves under a pseudonym or a nickname. The reasons behind the adoption of a pseudonym are multifaceted and vary according to the individual writer's circumstances: simplification of a lengthy name, the need to differentiate oneself from a writer with a similar or identical name, the concealment of ethnic identity, the desire for becoming famous with a more evocative name, concerns regarding privacy, the author's public status, the constraints of censorship, etc.

The renowned satirist Hakob Paronyan also signed the majority of his works and articles under pseudonyms or published them unsigned. This article specifically examines pronoun-pseudonyms and several other pseudonyms of newly found works in the satirical newspapers "Meghu" ("Bee") and "Tatron" ("Theatre") that remained unattributed to Paronyan for years. The study analyzes the motivations behind Paronyan's use of these newly identified pseudonyms, provides quantitative statistics on their application, and highlights inconsistencies and potential reasons for their usage.

**Keywords:** *Hakob Paronyan, pseudonym, nickname, satirical newspaper "Meghu" ("Bee"), satirical newspaper "Tatron" ("Theatre"), pronoun-pseudonym, unsigned.*